



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< >> \_\_\_\_\_ 2018 թ.

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16

N: \_\_\_\_\_

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ հայրենակիցներ

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Սահմանադրության օրվա առթիվ: 1995թ. հուլիսի 5-ին հայ ժողովուրդը հանրաքվեով ամրագրեց իր ազատ, անկախ և ինքնիշխան պետություն ստեղծելու գաղափարը, ընդունվեց մեր երկրի հիմնական օրենքը՝ Հայաստանի նորանկախ Հանրապետության առաջին Սահմանադրությունը: Ներկայումս բարեփոխված Սահմանադրությունը կատարում է իր կարևոր առաքելությունը՝ երաշխավորում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները և ազատությունները:

Համոզված եմ, որ մեր երկրի հիմնական օրենքը ծառայել է և ծառայելու է մեր ժողովրդին, հիմք է հանդիսանալու ժողովրդավարության ամրապնդման համար, կարգավորելու է պետության ներքին և արտաքին կյանքը, լինելու է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավոր, իսկ մայր օրենքով առաջնորդվելը ժողովրդական, թավշյա հեղափոխությունից հետո, նոր Հայաստանում լինելու է մեր ապրելակերպի ու գործունեության հիմնաքարը:

Կրկին շնորհավորելով բոլորիս՝ մեր ժողովրդի համար այս կարևորագույն տոնի առթիվ, մաղթում եմ քաջառողջություն, խաղաղություն ու բարեկեցություն:

Կ.ՍԱՐՈՒԿՅԱՆՅԱՆ